

յատար ազգային սուլթանսն ընդ խասէքւոյն եւ վալլտէի, գայ արքայ ի տեսութիւն նոցին եւ ի մէջ նոցա երբեմն երբ նստի, ասէ արքայ. Ա՛հ նէնէճըկըմ, հատտի զաթընտան զիատէ կիւզէլլըկըն իչուճն փէք սէվէր ըմըչ պապամ սէնի. դառնայ եւ առ մայր որդւոցն ասէ ցթագուհի. Տեսանե՞ս զպաշպաղլամասընը իմ նէնէի: Եւ արդ այսօր ի մահ գրաւեալ ի հող լուծանի, եւ միայն պարտատեարքն ողբան զկնի, որոց ոչ ոք եւ ոչ փող մի գոյ թէ հատուցանի: Եւ թաղեն զնա ի մէջ պարտիզին առաջի դրան թուրպէի Մուհամէտ շահատէի, զոր շինեալ էր հայր նորին Սուլթան Սիւլէյման Սէլաթին զայն ճամի, եւ հարեալ վրան ի վերայ թուրպէին արք պահապանք եւ ընթերցողք ճուզիցն Փուրխանի՝ զերիս աւուրս զցայգ եւ ի ցերեկի: Ուր երթեալ իմ եւ տեսեալ՝ փղձկեալ արտասուէի զորդւոցս Ադամայ զվախճանս խիղճ 'ւ աւաղելի: Սա է նա, որ տիեզերակալն Իպրահիմ նուազեալ սրտիւք առաջի նորա սնկեալ դեգերի, եւ ընդ քաղցրակոկորդ շէհրի լեզուին զմայլեալ խելաճապաղի, եւ այնքան հարեալ սաստկիւ ի սէր ցնդի, այլ եւ ուտելեօք եւ ըմպելեօք ոչ միայն յարքայարանս եւ ի պարտիզի, այլ եւ նստուցեալ ի կառս զգիշերն՝ զամբարօք շքրջեալ պատաղի, եւ ընդ ծամակալացն երբեմն ի խազալն արքայի՝ ասէին. Լե՛ր այսու եւ դու եւ մեզ նմանի. զորոյ հիւսեալ զմորուաց նորա փուճն խառն ընդ ոսկեթելս փաղփուճնի եւ կապեալ ընդ հիւսուածնս ծամակալս, եւ թեւս արկեալ նոքօք արքայն կաքաւի, եւ արտաքոյ ձայնս զանազան երգոցն ընդ նուազաբանացն կցորդի, որպէս յերգս առեալ զայն ասէին ռամիկըս սոյն քաղաքի. Սաչ պաղի թաքար սաչընէ, կիտէր սարայըն իչինէ, սէնի սէվէնըն սուչը նէ՞. սաչ պաղը տէվրան սէնընտըր, ալէմտէ տէվրան սէնընտըր, եւ որ զկնի: Եւ ընդ շաղապատիւն ընդ սնկա-